ՆԱԽԱԳԻԾ

արձանագրային

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2013 թվականի --ի N - Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՄՓՈՓ ՀԱՄԱԹՎԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգով նախատեսված տարածքային զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 135–Ն որոշումը, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերական խնդիրները հաստատելու մասին» N 70-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ամփոփ համաթվի հաշվարկման մեթոդաբանությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված
Հայաստանի Հանրապետության կառավարության
2013 թվականի .....
N --------- արձանագրային որոշման

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ յուրաքանչյուր քաղաքացու ընտանիքի համար բավարար կենսամակարդակի ստեղծման, ինչպես նաև կենսապայմանների բարելավման ուղղությամբ:

2. Հայաստանի Հանրապետությունում աղքատության մակարդակի կրճատումը եղել է տարբեր կառավարությունների կարևորագույն խնդիրներից մեկը և արտացոլվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած վերջիններիս գործունեության ծրագրերում: Մասնավորապես Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի թիվ 515-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրով սահմանված է, որ մինչև 2017 թվական Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակադրում է 8-10 տոկոսային կետով կրճատելու աղքատության մակարդակը:

3. Մարդկային աղքատության կրճատման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել են մի շարք ռազմավարական ծրագրեր, մասնավորապես Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի թիվ 994-Ն որոշմամբ՝ «Աղքատության կրճատման ռազմավարական ծրագիրը», Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ՝ «Կայուն զարգացման ծրագիրը» և այլն: Բոլոր ծրագրերի առաջնային նպատակը աղքատության կրճատմանն ուղղված պետական նպատակուղղված քաղաքականության իրականացումն էր:

Վերոնշյալ ծրագրերում ընդհանուր հանրապետական աղքատության կրճատման ցուցանիշը դիտարկվել է միայն մարդկային աղքատության կրճատման համատեքստում՝ առանց գնահատելու համայնքային կենսապայմանների դերակատարումը՝ այդ գործընթացում:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդաբանությունում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

1) համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ամփոփ համաթիվ՝ համայնքում եկամուտ ստեղծելու հնարավորության, համայնքի խոցելիության և համայնքում բարեկեցիկ ապրելու հնարավորության սահմանափակության ու անհասանելիության ցուցանիշների հանրագումարի արդյունքում ձևավորված ցուցանիշ,

2) համայնքում եկամուտ ստեղծելու հնարավորություն՝ համայնքի ֆիզիկա-աշխարհագրական դիրքով, բնակլիմայական պայմաններով, գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսով, դրանց կառուցվածքով (վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտավայրեր և այլն) և որակով, բուսաբուծությամբ և անասնապահությամբ զբաղվելու հնարավորությամբ, բնակչության սեռատարիքային կազմով և այլ գործոններով պայմանավորված ցուցանիշ է, որը օգտագործվում է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը գնահատելու համար,

3) համայնքի խոցելիություն՝ համայնքի աղքատության հակվածության գնահատման ցուցանիշ է, որը օգտագործվում է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը գնահատելու համար,

4) համայնքում բարեկեցիկ ապրելու հնարավորությունների սահմանափակության և անհասանելիություն՝ համայնքում ենթակառուցվածքների ու ծառայությունների առկայությամբ և որակով պայմանավորված ցուցանիշ է, որը օգտագործվում է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը գնահատելու համար,

5) մասնակի ցուցանիշներ՝ մեկից ավելի նույնաբովանդակ ցուցանիշների թվաբանական գործողության արդյունքում ձևավորված ցուցանիշ է, որը իր մեջ պարունակում է տնտեսագիտական իմաստ,

3. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական վիճակագրությունը մարդկային աղքատության մակարդակը գնահատելու համար օգտագործում է անհատի կողմից սպառման ցուցանիշը: Սպառման ցուցանիշը հաշվարկվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ընտրանքային հետազոտությամբ ստացված տվյալների հիման վրա: Արդյունքում մարդկային աղքատությունը գնահատվում է աղքատների ընդհանուր թվաքանակի համաթվով, որն իրենից ներկայացնում է մեկ

չափահաս անդամի հաշվով աղքատության գծից ցածր սպառում ունեցող մարդկանց թիվը: Սակայն սպառումից բացի մարդկանց կենսամակարդակի, հետևաբար աղքատության վրա որոշակի ազեցություն ունի նաև այն միջավայրը որտեղ վերջինս ապրում է:

2. Մարդիկ ամեն օր օգտվում են այնպիսի հանրային բարիքներից, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, մշակույթը, աղբահանությունը, լուսավորությունը, կոմունալ և այլ ծառայությունները: Այս ծառայությունների ծավալները, որակը և հասանելիությունը տարբեր տարածքներում և համայնքներում տարբեր են: Դրանք ազդում են տվյալ համայնքի բնակչության բարեկեցության վրա, հետևաբար որոշակի ազդեցություն են ունենում նաև տվյալ բնակչության աղքատության վրա:

3. Հայաստանի Հանրապետությունում համայնքները խիստ տարբեր են նաև իրենց բնակլիմայական պայմաններով, եկամուտ ստեղծելու հնարավորությամբ, ենթակառուցվածքների առկայությամբ և վիճակով, առողջապահական և կրթական ծառայությունների մատչելիությամբ, միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ու գյուղատնտեսական շուկաների նկատմամբ իրենց ունեցած դիրքով և այլ գործոններով: Թվարկված և մի շարք այլ գործոններ տարբեր ազդեցություն են ունենում համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի վրա: Դրանք, ունենալով տարբեր ազդեցություն, միաժամանակ բացասաբար ազդեցություն են ունենում նաև տարածքային համաչափ զարգացման գործընթացում:

4. Բնակլիմայական պայմանների տարբերությունների մեղմումը գործնականում հնարավոր չէ, սակայն համայնքայի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի վրա ազդեցություն ունեցող թվարկված մյուս գործոնների արդյունավետ կառավարման դեպքում կարող է բարձրանալ պետության կողմից մարդկային աղքատության կրճատման ուղղությամբ իրականացվող քաղաքականության արդյունավետությունը:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՄՓՈՓ ՀԱՄԱԹՎԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Հիմք ընդունելով վերոգրյալը և նպատակ ունենալով մարդկային աղքատության կրճատումը՝ անհրաժեշտություն է առաջանում մշակելու որոշակի մեթոդաբանություն, որը գնահատելով տվյալ համայնքի աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները, ռեսուրսային ապահովվածությունը, եկամուտ ստեղծելու հնարավորությունները, ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը, համայնքի բնակչության սոցիալական

վիճակը, կրթական, առողջապահական, մշակույթային ծառայություններից օգտվելու մատչելիությունը և այլ գործոններ, հնարավորություն կընձեռնի ընդհանրացված մեկ (մի քանի) ցուցանիշներով գնահատելու տվյալ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը հանրապետության մյուս համայնքների համեմատ:

2. Ըստ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի համայնքների դասակարգում ունենալու պարագայում հնարավորություն կընձեռնվի իրականացնելու պետական նպատակային քաղաքականություն՝ ուղղված հատկապես սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակ ունեցող համայնքներում իրավիճակի շտկմանը, որը նպաստելով մարդկային աղքատության կրճատմանը՝ կնպաստի նաև տարածքային համաչափ զարգացմանը:

3. Համայնքների ըստ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի դասակարգումը անհրաժեշտ է հատկապես պետության կողմից իրականացվող կապիտալ ներդրումների քաղաքականության արդյունավետության բարձրացման համար: Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կապիտալ ներդրումները ներկայումս չեն գնահատվում տարածքային համաչափ զարգացման և տվյալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում ունենալիք դերակատարման տեսանկյունից: Բացառությամբ վերջին տարիների՝ մարզերում հրատապ խնդիրների լուծման նպատակով հատկացված միջոցներից, մնացած ծրագրերում, հաշվի չի առնվել նույնիսկ մեկ շնչի հաշվով կապիտալ ներդրումների որոշակի համամասնությունների պահպանումը: Նման մոտեցումը բացասաբար է անդրադառնում մարդկային աղքատության կրճատման գործընթացում ներդրումների արդյունավետությանը և միաժամանակ առաջացնում է տարածքային զարգացման համամասնությունների շեղում: Նկատի ունենալով հանրապետությունում մարդկային աղքատության մակարդակի բարձր ցուցանիշը, ինչպես նաև պետական սուղ միջոցները արդյունավետ օգտագործելու գերխնդիրը՝ կապիտալ ներդրումների արդյունավետության գնահատումը համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և տարածքային համաչափ զարգացման համատեքստում անհրաժեշտություն է:

4. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի գնահատական ունենալու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից մշակվել է մեթոդաբանություն (համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ամփոփ համաթիվ), որը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր համայնքի սոցիալ-տնտեսական տվյալների հիման վրա գնահատելու տվյալ

համայնքի զարգացման մակարդակը: Գործընթացի իրականացման արդյունքում բացահայտվում են նաև այն գործոնները, որոնք խոչընդոտում են տվյալ համայնքի զարգացմանը: Առկա է նաև համայնքները նկարագրող համապատասխան տեղեկատվական բազա: Ըստ էության առկա է նաև համապատասխան գործիքակազմ, որով պետք է իրականացվի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի գնահատումը: Գործընթացը հնարավորություն է տալիս իրականացնելու մարդկային աղքատության մակարդակը կրճատող նպատակային ծրագրեր:

5. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի գնահատման մոտեցումների մշակումը և օրենսդրորեն հաստատումը բխում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2011թ. հունիսի 30-ին հավանության արժանացած «Տարածքային զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» թիվ 38 արձանագրային որոշումից և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվկանի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային զարգացման հայեցակարգով նախատեսված տարածքային զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 135-Ն որոշումից, որի մասնավորապես 6-րդ կետով նախատեսված է՝ համայնքներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին կատարվող կապիտալ ներդրումների արդյունավետության հաշվարկում՝ մարդկային աղքատության կրճատման գործընթացում տվյալ ներդրումների ունեցած ազդեցության տեսանկյունից:

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունում համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի հաշվարկման մեթոդաբանության մշակման հիմքում դրվել են հետևյալ սկզբունքները.

1) համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշների ժամանակաշրջանի առումով համեմատելիություն.

2) համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի հաշվարկման համար անհրաժեշտ մասնակի ցուցանիշների միանմանություն՝ համայնքները միմյանց հետ համեմատելու համար.

3) համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի հաշվարկման համար անհրաժեշտ ամփոփ ցուցանիշի կազմում միայն այնպիսի մասնակի ցուցանիշների

ներառում, որոնք չափելի են, տեղեկատվությամբ ապահովված և կարող են ստանալ քանակական գնահատականներ.

4) համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի հաշվարկման համար անհրաժեշտ ամփոփ ցուցանիշի ձևավորման նպատակով ընտրված տարբեր չափողականություն ունեցող ցուցանիշների՝ նույն չափողականությամբ արտահայտելու հնարավորություն:

2. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշի ստեղծումը ինքնանպատակ չէ, այն պետք է բավարարի «Տարածքային զարգացման հայեցակարգ»-ում նախատեսված նպատակների, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված ծրագրերի պահանջներին:

6. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաջարկվում է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշը պայմանավորել երեք գործոններով՝

1) համայնքում եկամուտ ստեղծելու հնարավորությամբ,

2) համայնքի խոցելիությամբ,

3) համայնքում բարեկեցիկ ապրելու հնարավորությունների սահմանափակությամբ և անհասանելիությամբ:

2. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշը հաշվարկելու համար օգտագործվել են տարբեր չափողականություն ունեցող ցուցանիշներ, որոնք միատարր դարձնելու համար առաջարկում ենք հետևյալ բանաձևը.

$$I_{ij} = \frac{X_{ij} - X_{j\min}}{(X_{j\max} - X_{j\min})}$$

որտեղ՝

$i = \overline{1,865}$, գյուղական համայնքների դասիչն է,

$j = \overline{1.5}$, ցուցանիշների դասիչն է,

X_{ij} - ն j ցուցանիշի արժեքն է i համայնքում,

$X_{j\max}$ ·· $X_{j\min}$ – j ցուցանիշի առավելագույն և նվազագույն արժեքներն են ըստ համայնքների:

Այս ցուցանիշը զերծ չէ նաև տնտեսագիտական իմաստից: Այն ցույց է տալիս i

համայնքի j բնութագրիչի հեռավորությունը՝ ըստ համայնքների, այդ բնութագրիչի լավագույն արժեքից:

3. Ըստ համայնքների՝ համեմատելի մեծություններ ունենալու նպատակով ցուցանիշները հաշվարկվում են մեկ բնակչի կամ մեկ տնային տնտեսության հաշվով:

4. Որպես համայնքում եկամուտ ստեղծելու հնարավորության համաթվի գնահատման ցուցանիշներ (I_i) նախատեսված են հետևյալները՝

1) համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը՝ արտահայտված 1 հա-ից ստացվող կադաստրային զուտ եկամտով (I_{1i}),

2) համայնքում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը (I_{2i}),

3) համայնքում մանր եղջերավոր անասունների գլխաքանակը (I_{3i}),

4) համայնքում խոզերի գլխաքանակը (I_{4i}),

5) համայնքում զբաղվածություն ունեցողների մասնաբաժինը՝ աշխատանքային տարիքի բնակչության թվաքանակի մեջ (I_{5i}),

6) համայնքի հեռավորությունը մոտակա ապրանքային շուկայից (λ_i-ն), որի ազդեցությունը համայնքի սոցիալ տնտեսական զարգացման վրա գնահատելու համար նախատեսված է փորձագիտական վերլուծության արդյունքում ստացված հետևյալ մոտեցումը՝

ա/ 1-15 կմ հեռավորության դեպքում շուկայի հասանելիությունը նախատեսված է 100%,

բ/ 15-30 կմ հեռավորության դեպքում շուկայի հասանելիությունը նախատեսված է 60%,

գ/ 30-50 կմ հեռավորության դեպքում շուկայի հասանելիությունը նախատեսված է 20%,

դ/ 50 և ավելի կմ հեռավորության դեպքում շուկայի հասանելիությունը նախատեսված է 100% ոչ հասանելի:

Եվ դրան համապատասխան՝ λ_i-ն, կախված համայնքի մոտակա ապրանքային շուկայից ունեցած հեռավորությունից , կընդունի հետևյալ արժեքները.

- $$\lambda_i = \begin{cases} 1, & \text{եթե հեռավորությունը} < 15 \text{ կմ} \\ 0.6, & \text{եթե } 15 \le \text{հեռավորությունը} < 30 \text{ կմ} \\ 0.2, & \text{եթե } 30 \le \text{հեռավորությունը} < 50 \text{ կմ} \\ 0, & \text{եթե հեռավորությունը} \ge 50 \text{ կմ} \end{cases}$$

Այսպիսով, եկամուտների ստեղծման հնարավորությունների ամփոփ համաթիվը կորոշվի հետևյալ բանաձևով.

$$I_i = \frac{1}{6}(I_{1i} + I_{2i} + I_{3i} + I_{4i} + I_{5i} + \lambda_i)$$

Այս համաթվի արժեքի նվազմանը զուգընթաց մեծանում է համայնքի աղքատության մակարդակը:

Եթե համայնքի հեռավորությունը Երևան քաղաքից չի գերազանցում 20 կմ-ը համայնքի եկամուտ ստեղծելու հնարավորության համաթիվը հավասարեցվում է մնացած համայնքների եկամուտ ստեղծելու համաթվի առավելագույն ցուցանիշին:

5. Որպես համայնքի խոցելիության համաթվի գնահատման ցուցանիշներ (I_i) նախատեսված են հետևյալները՝

1) գյուղատնտեսական նշանակության չմշակվող հողերի գործակից (V_{1i}),

$$V_{1i} = \frac{Y_{i1}}{X_{i1}}$$

որտեղ՝

Y_{i1} - i համայնքում գյուղատնտեսական նշանակության չմշակվող հողերի մակերեսն է (հա),

X_{i1} - i համայնքի գյուղատնտեսական նշանակության հողատարածքն է (հա),

V_{1i} - որոշվում է գյուղատնտեսական նշանակության յուրաքանչյուր հողատեսքի համար առանձին և հաշվարկվում է 1 հեկտարից ստացվող կադաստրային զուտ եկամուտով,

2) համայնքի սոցիալապես խոցելի տնային տնտեսությունների գործակից (V_{2i}),

$$V_{2i} = \frac{Y_{i2}}{X_{i2}}$$

որտեղ՝

Y_{i2} - նպաստ ստացող տնային տնտեսությունների թիվն է i համայնքում,

X_{i2} - տնային տնտեսությունների թիվն է i համայնքում,

3) համայնքում ոչ աշխատանքային տարիքի բնակչության գործակից (V_{3i}),

$$V_{3i} = \frac{Y_{i3}}{X_{i3}}$$

որտեղ՝

Y_{i3} - ոչ աշխատանքային տարիքի բնակչությունն է i համայնքում,

X_{i3} - i համայնքի առկա բնակչության թիվն է,

4) համայնքում միայն տարեցներից և ծերերից կազմված տնային տնտեսությունների գործակից (V_{4i}),

$$V_{4i} = \frac{Y_{i4}}{X_{i4}}$$

որտեղ՝

Y_{i4}- միայն տարեցներից և ծերերից կազմված տնային տնտեսությունների թիվն է i համայնքում,

X_{i4}- i համայնքում առկա տնային տնտեսությունների թիվն է,

5) համայնքի Ադրբեջանին սահմանամերձ լինելը (V_{i5}),

$$V_{i5} = \begin{cases} 1, & \text{եթե համայնքը սահմանամերձ է Ադրբեջանին} \\ 0, & \text{եթե համայնքը սահմանամերձ չէ Ադրբեջանին} \end{cases}$$

6) համայնքային բյուջեի եկամուտները մեկ բնակչի հաշվով (V_{i6}),

$$V_{i6} = \frac{Y_{i6}}{\overline{Y_6}}$$

որտեղ՝

Y_{i6}- ը 1 բնակչի հաշվով համայնքի բյուջեի եկամուտներն են,

$\overline{Y_6}$ - 1 բնակչի հաշվով համայնքի բյուջեի եկամուտների միջին մակարդակն է:

Համայնքի խոցելիության ամփոփ համաթիվը կորոշվի հետևյալ բանաձևով.

$$V_i = \frac{1}{6}\left(V'_{i1} + V'_{i2} + V'_{i3} + V'_{i4} + V'_{i5} + \frac{1}{V'_{i6}}\right)$$

V_i-ի արժեքի աճին զուգընթաց մեծանում է համայնքի աղքատության մակարդակը:

6. Որպես համայնքում բարեկեցիկ ապրելու հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթվի գնահատման ցուցանիշներ (HP_i) նախատեսված են հետևյալները՝

1) հողազուրկ տնային տնտեսությունների տեսակարար կշիռը համայնքի տնային տնտեսությունների թվաքանակում (HP_{i1})՝

$$HP_{i1} = \frac{Z_{i1}}{X_i}$$

որտեղ՝

Z_{i1} համայնքում հող չունեցող տնային տնտեսությունների թիվն է,

X_i - համայնքի տնային տնտեսությունների թիվն է,

HP_{i1}- աճը բերում է աղքատության մակարդակի աճի,

2) կրթության անհասանելիության և ոչ մատչելիության համաթիվ (HP_{i2}) , որն

հաշվարկվում է.

$$HP_{i2} = \begin{cases} 0, & \text{եթե համայնքը կրթության հասանելիության հետ կապված հիմնախնդիր չունի,} \\ 1-7, & \text{եթե համայնքը հիմնախնդիր ունի, ապա համայնքի ղեկավարը փորձագիտական գնահատատում է 1-7 միջավայրում տվյալ համայնքի զարգացման գործընթացում այն որպես խոչընդոտող գործոն,} \end{cases}$$

3) առողջապահական ծառայությունների սահմանափակության և անհասանելիության համաթիվ (HP_{i3}): Քանի որ խոսքը վերաբերվում է «համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակն արտահայտող ամփոփ համաթվին», այս բաղադրիչի միջոցով նախատեսված է գնահատել միայն համայնքի բնակչության առաջին բուժօգնություն ստանալու մատչելիությունը, ցուցանիշը հաշվարկվում է,

$$HP_{i3} = \begin{cases} 0, & \text{եթե համայնքի բնակչությունը առաջին բուժօգնություն կարող են ստանալ (0-15) կմ հեռավորությամբ գտնվող բժշկական հաստատությունում,} \\ 0.5, & \text{եթե մոտակա բժշկական հաստատությունը գտնվում է (15-30) կմ հեռավորության վր ,} \\ 1, & \text{եթե մոտակա բժշկական հաստատությունը գտնվում է 30 և ավելի կմ հեռավորության վրա:} \end{cases}$$

4) կենսապայմանների հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթիվ (HP_{i4}), որի բաղադրիչներն են.

ա) անվտանգ խմելու ջրից օգտվելու հնարավորությունների համաթիվ (HP^1_{i4}), որը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$HP^1_{i4} = \begin{cases} 0, & \text{եթե համայնքը անվտանգ խմելու ջրի հիմնախնդիր չունի,} \\ 1-7, & \text{եթե համայնքը հիմնախնդիր ունի, ապա համայնքի ղեկավարը փորձագիտական գնահատատում է 1-7 միջավայրում տվյալ համայնքի զարգացման գործընթացում այն որպես խոչընդոտող գործոն,} \end{cases}$$

բ) համայնքի ճանապարհների վիճակի համաթիվ (HP^2_{i4}), որը որոշվում է հետևյալ բանաձևով

$$HP_{i4}^{2}=\begin{cases}1 & \text{եթե ճանապարհները ասֆալտապատ են,}\\ 2 & \text{եթե հիմնականում ասֆալտապատ են,}\\ 3 & \text{եթե հիմնականում հողից են կամ մանրաքարից,}\\ 4 & \text{եթե բոլորը հողից են կամ մանրաքարից,}\end{cases}$$

Կենսապայմանների հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթիվը հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$HP_{i4}=\frac{1}{2}\left(HP_{i4}^{1}+HP_{i4}^{2}\right)$$

Բարեկեցիկ ապրելու հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթիվը կհաշվարկվի հետևյալ բանաձևով.

$$HP_{i}=\frac{1}{4}\left(HP_{i1}+HP_{i2}+HP_{i3}+HP_{i4}\right)$$

7. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ամփոփ համաթիվը հաշվարկելու համար կարելի է օգտագործել Աթքինսոնի հետևյալ բանաձևը.

$$HDM_{i}=\left\{\frac{1}{3}\left(\frac{1}{I_{i}^{3}}+V_{i}^{3}+HP_{i}^{3}\right)\right\}^{1/3}$$

Ամփոփ ցուցանիշ ձևավորելու համար արդյունավետ կիրառություն կարող է ունենալ նաև կշռված միջինի գծային ֆունկցիան.

$$HDM_{i}=\alpha_{1}\cdot\frac{1}{I_{i}}+\alpha_{2}\cdot V_{i}+\alpha_{3}\cdot HP_{i}$$

i - ն՝ համայնքի դասիչն է, *j* =1,… , *n*,

α_i-երը տվյալ ամփոփ ցուցանիշի համար j հատկանիշի կարևորության գնահատականներն են (կշիռները), որոնք կարելի է որոշել տարբեր մոտեցումներով, այդ թվում նաև փորձագիտորեն:

8. Քաղաքային համայնքների համար լիովին կիրառելի է նույն մեթոդաբանությունը, սակայն, բնականաբար, կփոխվի ցուցանիշների ընտրությունը:

9. Նշված մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս նաև համայնքները դասակարգել նաև ըստ եկամուտների ստեղծման հնարավորության, խոցելության և բարեկեցիկ ապրելու հնարավորության, ինչպես նաև հաշվարկել այլ մասնակի ցուցանիշներ որոնք կարող են օգտագործվել պետական տարբեր նպատակային ծրագրերի իրականացման ժամանակ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՄՓՈՓ ՀԱՄԱԹՎԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. **Անհրաժեշտությունը**

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի գնահատման մոտեցումների մշակումը և օրենսդրորեն հաստատումը բխում է 2011թ. հունիսի 30-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած «Տարածքային զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» թիվ 38 արձանագրային որոշումից բխող միջոցառումների ծրագրից, որի մասնավորապես 6-րդ կետով նախատեսված է՝ համայնքներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին կատարվող ներդրումների արդյունավետության հաշվարկում՝ աղքատության կրճատման գործընթացում տվյալ ներդրումների ունեցած ազդեցության տեսանկյունից: Միջոցառումը նախատեսված է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին>> թիվ 70-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետով:

2. **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Հայաստանի Հանրապետությունում մարդկային աղքատության մակարդակի կրճատումը հանդիսանում է ՀՀ կառավարության առաջնահերթ և գերակա խնդիրներից մեկը: Մարդկային աղքատության կրճատման նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք ռազմավարական ծրագրեր, մասնավորապես Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի թիվ 994-Ն որոշմամբ ընդունվեց «Աղքատության կրճատման ռազմավարական ծրագիրը», Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ՝ «Կայուն զարգացման ծրագիրը» և այլն:

Ներկայումս ՀՀ-ում մարդկային աղքատությունը գնահատվում է աղքատների ընդհանուր թվաքանակի համաթվով, որն իրենից ներկայացնում է մեկ չափահաս անդամի հաշվով աղքատության գծից ցածր սպառում ունեցող մարդկանց թիվը: Սակայն սպառումից բացի մարդկանց կենսամակարդակի, հետևաբար աղքատության վրա որոշակի

ազեցություն ունի նաև այն միջավայրը որտեղ վերջինս ապրում է: Հիմք ընդունելով վերոգրյալը և նպատակ ունենալով մարդկային աղքատության կրճատումը՝ անհրաժեշտություն է առաջանում մշակելու որոշակի մեթոդաբանություն, որը գնահատելով տվյալ համայնքի աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները, ռեսուրսային ապահովվածությունը, եկամուտ ստեղծելու հնարավորությունները, ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը, համայնքի բնակչության սոցիալական վիճակը, կրթական, առողջապահական, մշակույթային ծառայություններից օգտվելու մատչելիությունը և այլ գործոններ, հնարավորություն կընձեռնի ընդհանրացված մեկ (մի քանի) ցուցանիշներով գնահատելու տվյալ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը հանրապետության մյուս համայնքների համեմատ:

ՀՀ-ում համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի նկարագիրը ունենալու պարագայում հնարավորություն կընձեռնվի նաև մեծացնելու իրականացվող կապիտալ ներդրումների արդյունավետությունը՝ նպատակաուղղելով դրանք հատկապես զարգացման առումով վատ վիճակում գտնվող համայնքներ: Նկատի ունենալով հանրապետությունում աղքատության մակարդակի բարձր ցուցանիշը, ինչպես նաև պետական սուղ միջոցները արդյունավետ օգտագործելու գերխնդիրը՝ կապիտալ ներդրումների արդյունավետության գնահատումը անհրաժեշտություն է:

3. Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը

Համայնքային աղքատության գնահատական ունենալու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից մշակվել է մեթոդաբանություն (համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ամփոփ համաթիվ), որը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր համայնքի սոցիալ-տնտեսական տվյալների հիման վրա գնահատելու տվյալ համայնքի աղքատության մակարդակը, ինչպես նաև այն գործոնները, որոնցով պայմանավորված է տվյալ համայնքի աղքատ լինելը: Առկա է նաև համայնքները նկարագրող համապատասխան տեղեկատվական բազա: Ըստ էության առկա է համապատասխան գործիքակազմ, որի միջոցով հնարավոր է ոչ միայն գնահատել աղքատությունը, այլ նաև ցույց տալ խնդիրները, որոնցով պայմանավորված տվյալ համայնքը հանդիսանում է աղքատ: Նշվածը հնարավորություն է տալիս իրականացնելու աղքատության մակարդակը կրճատող նպատակային ծրագրեր:

Համայնքային աղքատության գնահատման մոտեցումների օրենսդրորեն հաստատումը հնարավորություն կընձեռի համայնքներում իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին կատարվող ներդրումների արդյունավետության հաշվարկում՝ աղքատության կրճատման գործընթացում տվյալ ներդրումների ունեցած ազդեցության տեսանկյունից:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի նախագծերը կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

<<Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ամփոփ համաթվի հաշվարկման մեթոդաբանությունը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և /կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Իրավական ակտն ընդունելու կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

<<Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ամփոփ համաթվի հաշվարկման մեթոդաբանությունը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում: